ԿԱՍԿՈ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

ИНГОАРМЕНИЯ
Ingo Armenia

Ո՞Ր ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԵԼ

- Մարդատար ավտոմեքենաներ
- Անձնական օգտագործման
- Մինչև 13 տարվա արտադրության են
- Գրավադրված չեն բանկում
- Պատկանում են ֆիզիկական անձանց
- Մասսայական արտադրության են և ընդգրկված չեն կասկո ապահովագրության հաշվիչով արգելվող կամ հաշվիչում չներառված մեքենաների ցանկում

ԻՆՉ ԾԱԾԿՈՒՅԹ Է ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ

- Պայմանագիրը կնքվում է կասկո ապահովագրության ամենաակտուալ ռիսկի՝ ճանապարհատրանսպորտային պատահարի համար: Ապահովագրվում է միայն ՃՏՊ ռիսկը՝ ընդհանուր օգտագործման ճանապարհներով երթևեկության ընթացքում ապահովագրված ՏՄ-ի վասվելը կամ ոչնչացումը այլ ՏՄ-ի հետ բախման հետևանքով
- Ապահովագրական գումարը (ապահովագրական հատուցման առավելագույն մեծությունը) կազմում է 1,500,000 ՀՀ դրամ:

Ապահովագրությունն իրականացվում է ՈՉ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ սկզբունքով: Սա նշանակում է, որ նույնիսկ այն դեպքերում, երբ մեքենայի ապահովագրական արժեքը գերազանցի ապահովագրական գումարը (1,5 մլն ՀՀ դրամը), վնասները 1.5 մլն ՀՀ դրամի սահմաններում հատուցվելու են ամբողջությամբ, և որևէ համամասնություն հաշվի չի առնվելու

- Կիրառվում է ֆիքսված չհատուցվող գումար 50,000 ՀՀ դրամի չափով: Ընդ որում չհատուցվող գումարը չի ավելանում անգամ 23 տարեկանից ցածր տարիքի կամ 3 տարուց պակաս վարորդական ստաժ ունեցող վարորդների համար

ԻՆՉ ԺԱՄԿԵՏՈՎ Է ԿՆՔՎՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

- Միայն 1 տարով
- Ապահովագրությունն ուժի մեջ է մտնում պայմանագրի կնքումից 2 օր հետո

ԿԱՍԿՈ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

ИНГОАРМЕНИЯ
Ingo Armenia

ՈՐ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ Է ԳՈՐԾՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- Ապահովագրությունը գործում է ՀՀ, ԼՂՀ տարածքներում, ինչպես նաև տարվա ընթացքում 30 օր Վրաստանի, Իրանի, ԱՊՀ երկրների տարածքներում
- Վրաստանում, Իրանում, ԱՊՀ երկրներում ապահովագրությունը գործում է միայն համապատասխան համաձայնագրի կնքումից հետո: Համաձայնագրով ապահովագրության տարածքի նշված ընդլայնումը (ակտիվացումը) կատարվում է անվճար
- Վրաստանի, ԱՊՀ երկրների, Իրանի տարածքների ակտիվացումը իրականցվում է միաժամանակ և միանվագ՝ տարեկան 1 անգամ և գործում է առանց ընդհատումների 30 օր: Առանձին որևէ տարածաշրջանի ընդլայնում չի իրականացվում
- Ապահովագրության տարածքի ընդլայնման (ակտիվացման) համաձայնագիր կնքելու համար հաճախորդը կարող է մոտենալ ընկերության ցանկացած գրասենյակ

ՈՐՔԱՆ Է ԿԱԶՄՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԸ

- Տարեկան ապահովագրավճարը կազմում է 77,500 ՀՀ դրամ

  Արական սեռի վարորդ ընդգրկելու դեպքում լրացուցիչ վճարը կազմում է 17,500 ՀՀ դրամ

  Ապահովագրավճարը վճարվում է միայն միանվագ, պայմանագրի կնքման պահին

ԻՆՉՊԵՍ ԿԱՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ-ի ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ:

ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ

- ՏՄ-ի հաշվառման վկայագիրը (տեխնիկական անձնագիր)
- Ապահովադրի անձնագիր
- Լիազորված վարորդի անձնագիր և վարորդական վկայական

ԻՆՉՊԵՍ Է ԿՆՔՎՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

- Պայմանագրի թողարկում
- Լուսանկարում, տեսաձայնագրում՝ համաձայն ֆիզիկական անձանց հետ կամավոր հիմունքներով կնքվող կասկո պայմանագրերի դեպքում կիրառվող ՏՄ լուսանկարման ուղեցույցի (04.10.28)

ԿԱՍԿՈ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

ИНГОАРМЕНИЯ
IngoArmenia

ԿԱՍԿՈ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

www.ingoarmenia.am

- Մեքենայի արժեքի գնահատում
- Պայմանագրի կնքելուց հետո հաճախորդին տրվում են ապահովագրության վկայագիրը և «Տրասնպորտային միջոցների կամավոր ապահովագրության կանոնները՝ հաստատված խորհրդի կողմից 28.11.2013թ. (iso կոդ՝ 04.10.22)

ԻՆՉՊԵՍ Է ԱՇԽԱՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
Վթարի դեպքում հաճախորդը անհապաղ կապ է հաստատում ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ-ի զանգերի կենտրոնի հետ և ստանում հրահանգներ

Հեռ.՝ 010 59 21 21